Շնորհք, ողորմութիւն, սէր, խաղաղութիւն և քաղցր ակնարկութիւն Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ և լուսասփիւռ հովանի Մեծի Տաճարիս Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, և պահպանողական զօրութիւն Աստուածամուխ Սուրբ Գեղարդեան, և կենսատու խաչամասին Քրիստոսի, օրհնութիւն շնորհաբաշխ Աջոյ բազմաչարչար նահատակին Քրիստոսի Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի, զօրութիւն տեւողական նշխարացն Սրբոց և մանաւանդ սրբափայլ կուսանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց և ամենից սքանչելագործ սրբութեանց գանձելոց ի ծոց Մօրս Լուսոյ հրաշակերտ Տաճարիս, հանգիցէ ի վերայ հոգւոց և մարմնոց ձեր ամենեցուն ամէն։

Եւ ընդ Տեառնապարգեւ Առաքելական ողջունիս և օրհնութեանցս յայտ առնեմք սիրելեացդ, զի առ ի լնուլ զբազմապատիկ պիտոյս և զկարօտութիւն վիճակիդ՝ ահաւասիկ կարգեալ ի պաշտօն Առաջնորդութեան զԳերապատիւ Մեսրովբ եպիսկոպոսն Սրմբատեանց՝ զյաւէտ սիրելին մեր ի Տէր, առաքեմք առ Ձեզ ի ըստանձնել զիւրն պաշտօն և կառավարել զվիճակային, զկրթական և զայլ ամենայն գործս ըստ արժանւոյն՝ սահմանեալն կանոնօք համաձայն օրինաց եկեղեցւոյ մերոյ և պատուիրանաց մերոց։

Մեք քաջալոյս եմք, զի նորընտիր Սրբազան Առաջնորդն Ձեր՝ փութաւոր, կենցաղագէտ, բարենախանձ յատկութեամբք իւրովք վայելեալ ի ձէնջ զսիրալիր ընդունելութիւն և զհամակրութիւն և զարժանին աջակցութիւն յամենեցունցդ ըստ բարոյականին և ըստ նիւթականին, ուշ ի կուրծս եդեալ լցուսցէ զպիտոյս եկեղեցեաց և բազմակարօտ դպրոցաց վիճակիդ, պաշտպանեսցէ զմանուկս եկեղեցւոյ Հայաստանեայց ի հաղբից թշնամեաց ճշմարտութեան, ի բաց խլելով զչար որմունս յայգւոյն Քրիստոսի, զգուշացուցանելով զամենեսին ի հոգեկորոյս գաղափարաց օտարոտումն վարդապետութեան, արիութեամբ հովուեսցէ զՁեզ ի վայրի դալարւոջ և առ ջուրս հանգստեան աւետարանական վարդապետութեան և տիրապարգեւ խաղաղութեան, որպէս զի և Ձեզ, ինչ ոչ պակասեսցէ ըստ հոգւոյ։

Ակն ունիմք, սիրելի՛ որդեակք, զի և Աստուածապաշտու-